



## ԲՈՆՈՍԻՐԱԿԱՆ

# ԻՄ ԺՈՂՈՎԵԱԼ ԲԱՆՔ

Ըստրանօթ քաղած ենք զայս Ռուկեփորիկ Զ. 15 × 12 (13½ × 9) ձեռագրին մէջ զտուող ժողովածույթ մը, թղ 287-293ա, որ ունի վերոյիշեալ վերնագրեր «Իմ ժողովեալ բանք»։ Հ'ըսեր երբ և ուսկից. միայն երկու թուղթ վերջ կը գտնենք յանկարծ լուսանցքի գրայ «Անուանք մողորական Առաջնորդն ասացեալ է»։ ուրիշ լուսանցքի մը մէջ ալ՝ «Վարդապետք Հայոց է»։ Սակայն ասոնք կը ենապատասխաննն միայն մէջ երկու ասացուածներու։

Ձեռագրին մասին հետևեալ տեղեկութիւնները կու ույ Հ. Բ. Արքափեան «Մայր Յուցակ»ի մէջ. ԴԻՇ բոլորցիր մասերիկ՝ ցածագիր, տարրեր ճեկերով գրուած, և համաստագրուրիւնքն ալ շատ անտուր և դժուարինեսեի. - ստուան անյայտ, վասն զի կը պակի գրլուրեան յիշաւակարանք, այլ որովհետև պարունակուած նեղինեակուրեան կրսերացոյնները մինչև ժ. Պ. դարը կը հասնին, ձետևարար այդ դարեն յառաջ յէ կարող գրուած յինել. - Կազմոյ անյայտ- ՏԵՂԻ անյայտ ։

Իսկ ընդհանուր զաղափար մը տալու համար մեր հրատարակած մասերն ամփոփող ժողովածոյին պարունակութեանց նկատմամբ՝ դնենք նաև այն Ցուցակին հետեւեալ տեղեկութիւնները. «Այս ընդհանուր խորագրի ներքեւ՝ իրան ի «Խուռան և առանց մասնական վերնազրի զետե- «ղուած են, — Արքսոսոտէլի տաւան ստորոգու- « «թիններէն սկսեալ, — բազմաթիր իմաստա- « «սիրական, պատմական, աշխարհազրական, « «աստիճարաշխական, սումարական, աստուա- « «ծագանական, բնական, մենաբանական, ծի- « «սական, երաշխական, պաւանաբանական, « «ազգագրական, են, են, մանր և յոյժ հետա- « «քըրքրական տեղեկութիւններ և զրոյցներ Հմմո. « «Ցովի. Սարկաւագ Վ. կ հարցմանց հետո Նշա- « «նաւոր Է, ի մէջ այլոց, (թղ. 290բ.) երեք « «Մողեկութագման և զալստեան մասին աւան- « «գածը, ուր մէջ բերուած են անոնց անուանքն՝ « «պարսկի, արար, քաղդէացի և այլ լեզուներով. « «Նշանաւոր է նաև, թղ. 300ա. Ենովսայ երկու « «Արձանագրութեանց վերաբերեալ մանրամասն

« և տեղեկութիւնը յանուն Յովսեպոսի (տես Խորեն, «Պատմ. Ա. Գլ. Դր.)»: Ժողովածոյիս մէջ կան և սակայն նաև ինչ բաներ, որոնք թիւր են «և բացարձակապէս հճքեին: Օրին. աղազաւ, «թղ. 202ա, Ա. Յովսէփայ և Աստուածածնայ շորո ուստերս և երեք գտներս ունենալու մաս և սին աւանդուածներն, որոնք ժողովրդեան մէջ «ըլդող այլ ընդ այլոյ աւանդութիւններ են, և «կամ Աւետարանի թիւր հասկացողութիւններ»: (Տես Մայր Ցուցակ էջ 653):

Հ. Ղ. Տ.

«Չորս են կարգ գիտութեան. մի՛ զի զիտէ թէ զիտէ, և ասէ թէ չեմ բաւական խօսել. սայ իմաստուն է և հեզ, ուսմ' ի սմանէ: Բ. զիտէ թէ ոչ զիտէ, և խոստովանի անզիտութիւն, և սա իմաստուն է: ուսոյ զսա: Գ. ոչ զիտէ և անզիտանա(j) թէ ոչ զիտէ, և խօսի անզիտարար, սայ յիմար չ' զի ոչ զիտէ զինքեան տկարութիւն, զարթո՞ զսա: Դ. ոչ զիտէ. և զիտէ որ ոչ զիտէ և կոյտէ զիսրհուրդ իւր, և յանդգնի խօսել անզիտարար. սա յանդուզն է, փախի՞ր ի սմանէ:

«Գերկրաշափութիւնն՝ եզիտացիքն զըտան. Զթուականութիւնն՝ փիւնկեցիք, Զերաժշտականութիւնն՝ թրակացիքն, Զաստեղարաշնութիւնն՝ քաղէցացիք:

«Այսէոն ամաց ութունից առեալ հրաման ոչ տեսանել զման. ի հրամանէն մինչև ի գալն Տեսուն ի տաճարն՝ ամց երկու հարիւր վաթուուն և երկու:

«Ոնդամալյոծն որ երեսուն և ութ ամ էր հիւսնդ՝ անունն էնիայ է:

«Մովսէսի հօրն յամրամ ասեն և մօրն յոգարէթ, և թէսպացի կնոջն՝ թէրսարէ:

«Յեփրայեա(j) լատենն եղջի ասեն: Փարաւոնի դստերն՝ մասի, իսկ այլը թերմոթի: Սամարացի կնոջ անունն լուսինա, Տեռատեսին՝ Փոտինա, Քանանուհւոյն՝ վերինէ, Դպրին՝ Նիկոմիկոս. Ներքինոյ անունն՝ Կանգուգէն էր. Նարոգողնոսուրա(j) հօրն անունն զարուապար է, և մօրն՝ պէսալքա՞ որ թարքմանի մեծածին: Դրշխոյին՝ նսայ, որ ենք ի հարաւոյ: Աւազակն որ յաջմէ՝ ազգաւ հեթանոս, բայց խոստովանութեամբն բուն հրեայ և անուն

դեման. իսկ որ ի ձախմէն՝ ազգաւ հրեայ է, բայց տրտունջն՝ անհաւատ հեթանոսի, և անունն՝ կեստաս:

«Ո՞ եթուց. ոչըրո՞ Ո՞ ապուակեաց. Մազքոս: Ո՞ զլեզին երեր. առացոս: Ո՞ խոցեաց. Ղունկիանոս. ասեն թէ մին ակն կոյր էր. խոցեաց թէ սուս մեռուկ չլինի՛ ել ջուր և արիւն. նա ինդրեաց զտէզն... հասոյց որպէս զրեալ է թէ ետես և հաւատաց:

« ինն բենոր էր խաչին. երկու՝ ոտիցն. երկու ձեռացն. մին՝ յուսոյն վերա(j). մի՛ խաչի թէին. մի՛ Պիշտառուի տախտակին. երկու՝ այն տախտակին՝ յորո(j) վերա(j) ոտրն բենեալ էր:

« Հայոց գրեանցս կարգեալ է. զջօնականն՝ Մարենոցի հայրը լողումոն: Զջօնապատճառն՝ կարմնջածորոյ հայրը լումուէն: Զջօնացուցակն վարագահայրն Աստոմ: Զներրողենն Գրիգորէս կլայեցի Վկայասէր: Եւ զգրեանդ ի ձայն է թէ որպէս կարդան: ԶԱւետարանն Աջ: ԶԱւացեալն Բջ: Զիսային Դջ: Զներրողեանն Ի վերջին ձայնէ ստեղ:

« Զայնից զիւտց առաջինն(ի) հիւսնականէ. երկրորդն՝ ի դարրնականէ. երրորդն՝ ի գետոց. չորրորդն՝ յազօրաց. հինքիրորդ՝ յերկաթյո. վեցերորդ՝ յանասնոց. եօթներորդ՝ ի ծովու ծփանաց. ութերորդ ի ծովու կենզանեաց. իններորդ և տասներորդ՝ ի հաւուց:

« Ո՞րպէս տուան օրէնց: Բնականն՝ Աղամայ. Բարուականն՝ Նոյի. Բանաւորն՝ Արրահամու. Գրաւորն՝ Մովսէսի. Աւետարանն՝ Առաքելոցն. Վարդապետական՝ Եկեղեցւոյ:


« Ո՞րպէս խօսեցաւ ընդ առաջինն Աստուած: Ընդ Աղամայ և Եւայի՛ հինգ ան-, զամ: Ընդ կայենի՛ չորս: Ընդ Նոյի՛ վեց: Ընդ Արրահամու՝ ութ: Ընդ Աղամակա(j)՝ երիցս: Ընդ Յակոբա(j)՝ հինգ: Ընդ Լաւառու տեսլեանն՝ մին: Ընդ Մովսէսի՝

---

1. Կը կարգացուի նաև Սոգուհ. թերեւ Սամսէկ ըլլայ:

Ճնդի, Ընդ Ահարոնի առանձինն՝ հինգ, Ընդ Մովսեսի և ըստ Ահարոնի՝ Ժի: Ընդ Մարիամու՝ մի, Ընդ Մովսեսի և Եղիազարու՝ երկու, Ընդ Հագարու՝ չորս: Ընդ Բաղամու՝ վեց: Հրեշտակօք՝ երկու, իշխնի՝ մի: Միանգամայն թվ՝ կլի<sup>1</sup>:

« Լոյս բանին ի խելան ծագէք, խորհուրդն ի սիրտն. հեղութիւնն՝ ի լեզն, ցատում՝ ի լեզն, ստուգութիւնն՝ ի փա(յ)ծաղն. Հանճարն՝ յերիկամունքն, սէրն՝ ի թողն, ազահութիւնն՝ ի ստամոցն, հպարտութիւնն՝ ի բերանն, հանգիստն՝ ի պարանոցն, զօրութիւնն՝ յուան. զործն՝ ի ձեռան. ար(ո)ւստն՝ (յ)իմաստունս »:



## ՊԱՐՍԿԱՀԱՅ ԱՇՈՒՂՆԵՐ

ԵՐԳԻՑ ՏԵՐ ԿԱՐԱՊԵՏ ՕՀԱՆԵԱՆ

ՆՐԱ ԿԵԼԱՆՔԸ: Պարսկահայ երգիչների շարբում կարելի է յիշատակել նաև Տէրկարապետ Օհանեանին, որ ծնւել է 1815 թւին, Սպահանի Փէրիսա գաւառի Սանդիքարան գիլուում: Նրա նախնիցները գալթել են Հին-Զուղայից 1606 թւին, Շահ-Արքասի ձեռքով: Ազգընական ուսումն առել է կարապետը գիլուում, յայսնի տիրացու Տէր-Դաւթի մօտ, ապա անցել է Նոր-Զուղայի և ուսել իր հօրեղբօր՝ Ոնդրէասի մօտ: Անունեսն վերադառնալով գիւղ, պարապել է հողագործութեամբ: Պասկել և ունեցել է մի որդի Յովհաննէս անունով: 1840 թւին, 25 տարեկան հասակում, ձեռնադրելի է քահանայ Խաչատուր Արք-Եպիսկոպոսի ձեռքով և երկու տարի քահանայական պաշտօն է վարել Նոր-Զուղայում: Յետոյ վերադառնալով գիւղ, ստանձնել է Ս. Յովհաննու եկեղեցու քահանայութեան և միաժամանակ գաւառի զործակալութեան պաշտօնը, որը վարել է մինչև իր մահը: Մեռել է 1897 թ.

Մարտ 16-ին և թաղւել Սանգիրաբանի հայոց գերեզմանատանը, ուր վրան քար էլ զրաւծ չէ:

Ժամանակակիցների վկայութեամբ՝ Տէրկարապետը եղել է իր ժամանակի բանիմաց ցահանաներից մէկը և ամբողջ գաւառում յայտնի է եղել իրու աստւածաբարն-կրօնագէտ: Նա լաւ տեղեակ է եղել Ս. Գրբին և հմուտ աստւածաբարնական խնդիրներին. սիրում է եղել յաճախ վիճարանների Մահմեդական մօլլաների և բողոքական միսիօնարների հետ կրօնական բարդ խնդիրների վրայ: Այսօր երգչին ճանաչողները մեծ յարգանքով են յիշում նրան անունը:

Քերրատեհերը: Իրըն երգիչ, Տէր-կարապետը թողել է բաւական թւով թէ թուրքերէն և թէ Հայերէն երգեր, որոնց հաւաքած են երկու «դավթար»ների մէջ. դրանցից մէկը կաշեկազմ է և բաղկացած 108 թերթից և պարունակում է 181 կտոր երգ, որի 64-ը Հայերէն է և 117-ը թուրքերէն: Խակ միւսը լաթակազմ է և պարունակում է առաջին «դավթար»-ի մէջ եղած Հայերէն և թուրքերէն երգերից շատերը: Այդ երգերը, որոնք երգչի զգացմանցների զեղմունքն են, միծամանութեամբ բարոյա-իրատական և կրօնական բովանդակութիւնն ունին: Այնտեղ կան կրօնական ջերմուռանդութեամբ լի բազմաթիւ տաղեր, հաւատցի, յուաց, սիրոյ, այլ և բարոյ և ճշմարտութեան իրատներ, մեկնութիւններ Ս. Գրբի, եկեղեցոյ եօթը հորեղդի, երկրաւոր ու հանգերձեալ կեանցի վրայ, այլ և ներրողներ Աստծոյ, Յիսուսի, Ս. Յովհաննիսի վրայ: Կան նաև աղաչանք, հայցւածք, աղերսանք առ Աստւած և այլն: Այդ երգերով պատկերանում է մեր առաջ ոչ միայն հաւատացեալ ե եկեղեցակը մի քահանայ, որը յիշեցնում է մեզ միջնադարեան սուրբ հայրերին, այլ և իմաստաւէր-կրօնագէտ և բարոյախօս-բարողիչ: Եւ իսկապէս Տէր-կարապետն իր երգերի մէջ աւելի աստւածաբան-բարոյախօս քարողիչ է, քան բանաստեղծ:

1. Գումարը սիսլեր է. պէտք եւ ըստ թվ կլի: